Կին և քաղաքականությունը

2011 Նոյեմբեր

Անվճար հավելված

«Մարդկության մայրամուտը սկիզբ կառնի, երբ երկրի վրա «վերջանան» կանայք»

էջ 4

«Ես էլ, Հայաստանն էլ 20 տարեկան ենք»...

- Ես հավատում եմ, որ մարդու անունը շատ բան է ասում իր մասին,- ասում է Ազատուհին: - Ես ծնվել եմ 1991-ի մայիսին՝ Հայաստանի առաջին հանրապետության օրը, և դրա համար էլ ծնողներս իմ անունը դրել են Ազատուհի, իսկ իմ ծնվելուց մի քանի ամիս հետո՝ սեպտեմբերի 21-ին, Հայաստանն անկախացավ: Այս ամենն ինձ համար շատ խորհրդանշական է և միշտ մեծ ոգևորությամբ եմ պատմում բոլորին իմ անվան պատմությունը: Ինձ շատ է ոգևորում նաև այն, որ ես մեծանում եմ իմ հայրենիքի հետ, և այսօր ես էլ, Հայաստանն էլ 20 տարեկան ենք: Կարծես միասին ենք քայլում, մեկ-մեկ էլ կա՛մ ինքն է ինձնից առաջ ընկնում, կա՛մ ես իրենից, բայց կյանքի բոլոր փոփոխությունները ինչպես ես ինձ վրա եմ զգում, նույնն էլ զգում եմ Հայաստանի վրա...

Ազատուհին սովորում է Երևանի պետական համալսարանում, միջազգային հարաբերություններ է ուսումնասիրում: Հայաստան է եկել ինը տարի առաջ Իրանի Իսլամական Հանրապետությունից, և ինչպես ինքը նշեց՝ «մշտական և վերջնական» ապրելու է հայրենիքում: Իր ամենամեծ ձեռքբերումն է համարում ՀՀ քաղաքացի դառնալը և այդ փաստը հատուկ հպարտությամբ է նշում: Ազատուհին նաև վերջերս ձևավորված երիտասարդական խորհրդարանի անդամ է: Քաղաքականությամբ զբաղվելու մասին մտածել է, բայց կարծում է՝ կիրականացնի այդ մտադրությունը միայն այն դեպքում, եթե հասարակությունն իրեն ընտրի այդ դերը կատարելու համար:

- Շատ հաճախ ինձ ասում են՝ «դու աղջիկ ես, այսպես պետք է անես», ես էլ միշտ պատասխանում եմ՝ «առաջին հերթին ես ծնվել եմ որպես մարդ»: Չեմ ուզում անընդհատ կրկնվող բաներ ասել, բայց կնոջ դերը շատ ավելի մեծ է, քան մենք ընդունում ենք: Կարծում եմ՝ կգա այն օրը, երբ Հայաստանը կին նախագահ կունենա, միգուցե ոչ շուտով, բայց այդ օրը գալու է: 1918-ին՝ առաջին հանրապետության ժամանակ, աշխարհում առաջին կին դեսպանը եղել է Հայաստանի դեսպանը Ճապոնիայում՝ Դիանա Աբգարը: Իրականում դա ֆենոմեն է, որն էլ ապացուցում է, որ մենք առաջադեմ ենք, և այն ժամանակ մենք դա ցույց ենք տվել: Կնոջն ընտրելու իրավունք մեզանում դեռ առաջին հանրապետության տարիներին է տրվել, և առաջադեմ համարվող շատ երկրներ, կարելի է ասել, այս հարցում մեզնից են օրինակ վերցրել: Սակայն այսօր մենք կարծես դուրս ենք մեր տեղում, հատկապես իրավունքների լիարժեք իրականացման հարցում:

Բոլոր դեպքերում, եթե դու իրավունքներ ունես և տեր ես կանգնում քո իրավունքներին, հնարավորություններն էլ կարծես ձեռք ես բերում,- ասում է Ազատուհին՝ մեջբերելով Մահաթմա Գանդիի խոսքը. «Եթե ուզում ես տեսնել ինչ-որ փոփոխություն, ապա ի՛նքդ եղիր այդ փոփոխությունը»:

«Այս առումով չպետք է անընդհատ բողոքենք, թե ինչո՞ւ սա չեն անում, այլ պետք է ասենք՝ ինչու մենք չենք անում, և, ամեն մեկս մեզ վրա պատասխանատվություն վերցնելով, քարը քարին դնելով՝ կառուցենք մեր երկիրը»...

Կարինե Պետրոսյան

Դե յուրե - Դե ֆակտո

Իրավունքները հավասար են, իսկ հնարավորությունն՞երը

Դժվար թե ապացուցման կարիք ունի այն փաստը, որ երկրի Սահմանադրությամբ դե յուրե ամրագրված տղամարդկանց և կանանց հավասարությունը վերածվում է կանանց նկատմամբ դե ֆակտո խտրականության: Այլ հարց է՝ ինչո՞ւ է այդպես ստացվում, ինչո՞ւ երկու սեռերի հավասար իրավունքներ տրամադրելով՝ մենք հավասար արդյունքի չենք հասնում: Միջազգային հանրությունն արդեն վաղուց գտել է այս հարցի պատասխանը՝ առաջարկելով տղամարդկանց և կանանց հավասար հնարավորությունների բանաձևը: Եվրոպական երկրներից շատերն օրենսդրորեն ամրագրեցին այս մոտեցումը, ինչն էլ հանգեցրեց իրական արդյունքների սեռերի հավասարության ապահովման գործում: Նրանց օրինակին հետևելով գրեթե բոլոր ԱՊՀ երկրները նույնպես ընդունել են նման օրենքներ: Բոլորովին վերջերս Հայաստանի կառավարությունն էլ Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացրել «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրինագիծը:

Նման օրենքի ընդունման անհրաժեշտությանը մեր երկրի կառավարությունն աստիճանաբար հանգեց՝ կանանց նկատմամբ խտրականության ժխտումից մինչև անցյալ տարի գենդերային քաղաքականության հայեցակարգի հաստատումը: «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրինագծի առաջադրումը այդ քաղաքականության տրամաբանական շարունակությունն է: Այս օրենքով պետությունն ըստ էության երաշխավորում է կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորություններ իրենց սահմանադրական իրավունքներն իրացնելու կյանքի բոլոր ոլորտներում:

Հոկտեմբերի կեսից այս օրինագիծը շրջանառության մեջ է դրվել խորհրդարանում և Աժ կանոնակարգով նախատեսված նախնական ընթացակարգերն անցնելուց հետո կներկայացվի պատգամավորների քննարկմանը լիագումար նիստում: Նշենք, որ ներկայիս գումարման պատգամավորների համար սա նման բովանդակությամբ օրենքի ընդունման երկրորդ փորձը կլինի:

Առաջինը չորս տարի առաջ էր՝ 2007-ի սեպտեմբերին, երբ պատգամավորները ձայների մեծամասնությամբ մերժեցին նույնիսկ օրակարգում ընդգրկել այն ժամանակ ընդդիմադիր համարվող «Օրինաց երկիր» խմբակցության գրեթե նույն վերնագրով նախաձեռնությունը: «Դեմ» դիրքորոշումը կառուցվում էր երկու փաստարկների վրա. մի կողմից, պատգամավորների կարծիքով, օրինագիծը իրավաբանական տեսանկյունից անկատար էր, և մյուս կողմից՝ նրանք չէին ցանկանում տեսնել նման օրենքի ընդունման անհրաժեշտությունը: Իրենց իսկ բացատրություններով՝ քանի որ դա «հայ կնոջ երջանկության բանաձևում չի տեղավորվում»...

Այսօր իրավիճակն արմատապես փոխվել է և ոչ միայն այն պատճառով, որ «Օրինաց երկիրը» իշխող կոալիցիայի անդամ է: Այժմ օրինագիծը ոչ թե մեկ առանձին կուսակցության, այլ կոալիցիոն կառավարության նախաձեռնությունն է: Պատգամավորները հիմքեր չունեն կասկածելու դրա մշակման համար կառավարության կողմից ձևավորված փորձագիտական խմբի իրազեկությանը: Բացի այդ, օրինագծի ընդունման անհրաժեշտության հարց էլ չի կարող ծագել, քանի որ այն ուղղակիորեն արտացոլում է մի շարք միջազգային փաստաթղթերի, այդ թվում՝ Եվրամիության հետ Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությունները՝ կարգավորել կյանքի տարբեր ոլորտներում առկա գենդերային անհավասարակշռությունը:

Շարունակությունը՝ 2-րդ էջում

Ուշադրություն

Այս տարվա դեկտեմբերից «Կինը և քաղաքականությունը» կարող եք կարդալ նաև ինտերնետում: Սիրով հրավիրում ենք բոլորին այցելել www.WomenNet.am մեր նորաստեղծ կայքը, որտեղ դուք նաև հնարավորություն կունենաք մեկնաբանություններ թողնել և օնլայն քննարկումների մասնակցել:

Փաստաշար

Ո՞ր երկրներում են կանայք լավ ապրում

Հայաստանը 43-րդ տեղում է

Newsweek ամերիկյան հանդեսը հրապարակել է կանանց ապրելու համար լավագույն երկրների ցուցակը: Որպես չափանիշ ընտրվել են իրավական դաշտը, կրթության, բժշկության, զբաղվածության ոլորտի հասանելիությունը, ինչպես նաև կանանց մասնակցությունը քաղաքականությանը:

Առաջին հնգյակում են Իսլանդիան, Շվեդիան, Կանադան, Դանիան, Ֆինլանդիան: Հայաստանը 165 երկրների շարքում հայտնվել է 43-րդ տեղում՝ հիմնականում կանանց կրթական բարձր մակարդակի շնորհիվ: Ամենացածր միավորը մեր երկիրն ստացել է քաղաքական կյանքին կանանց մասնակցության ցուցանիշով:

Կանանց համար ամենավտանգավոր հինգ երկրները

Thomson-Reuters հիմնադրամը ուսումնասիրություն է անցկացրել, որի արդյունքներով նշել է կանանց ապրելու համար հինգ վատագույն երկրները՝ Աֆղանստան, Կոնգո, Պակիստան, Հնդկաստան և Սոմալի: Աֆղանստանն առաջին տեղում է, քանի որ այստեղ կանանց 87%-ն անգրագետ է: Ի հավելումն՝ յուրաքանչյուր 11-րդ կինը մահանում է ծննդաբերության ժամանակ, աղջիկների 80%-ին հարկադրաբար են ամուսնացնում: Կոնգոն երկրորդ տեղում է հայտնվել սեռական բռնության բարձր մակարդակի պատճառով, որին ամեն տարի ենթարկվում է մոտ 400 հազար կին: Պակիստանում այսպես կոչված պատվի սպանությունների զոհ է դառնում տարեկան 100 հազար կին: Հնդկաստանում պահպանվում է մարմնավաճառության մեջ ներգրավված կանանց և մարդկանց առևտրի խիստ բարձր մակարդակը, տարածված է նորածին աղջիկներին սպանելու և ընտրողական աբորտների պրակտիկան: Սոմալիում կանանց 95%-ը ենթարկվում է «թլփատման» հաշմող վիրահատության:

Խաղաղության 2011 թվականի մրցանակին արժանացավ երեք կին

Այս տարվա խաղաղության Նոբելյան մրցանակը շնորհվել է Լիբերիայի առաջին կին նախագահ 72-ամյա Էլեն Ջոնսոն Սիրլեֆին, լիբերիացի կին ակտիվիստ Լեյմահ Գբովիին և Եմենից «Կին լրագրողներ առանց շղթաների» իրավապաշտպան կազմակերպության 32-ամյա ակտիվիստ Թավաքուլ Քարմանին:

Դե յուրե - Դե ֆակտո

Իրավունքները հավասար են, իսկ հնարավորությունն՞ը

Սկիզբը՝ 1-ին էջում

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքն այսօր պետական քաղաքականության մի մասն է, և խորհրդարանական մեծամասնությունը հետաքրքրված է այն ընդունել, իսկ դա արդեն ավելի ծանրակշիռ փաստարկ է, քան «հայ կնոջ երջանկության բանաձևի» վերաբերյալ մտահոգությունները:

Մնացել է ընդամենը համոզել այն պատգամավորներին, որոնք այնուամենայնիվ անկեղծորեն համոզված են, որ տղամարդիկ և կանայք մեզանում իրապես հավասար են և կարիք չկա նրանց լրացուցիչ հավասարեցնել: Ընդ որում, օրինագծի պոտենցիալ հակառակորդներից շատերը նույնիսկ չեն կասկածում, որ խոսքն իրականում ոչ միայն կանանց իրավունքների կամ կանանց ներուժը ներգրավելու համար որոշակի միջոցների մասին է, այլ երկու սեռերի համար հնարավորությունների ապահովման: Ու կան ոլորտներ, որոնցում չէր խանգարի մտածել տղամարդկանց իրավունքներին ու հնարավորություններին աջակցելու մասին:

Այլ հարց է, որ կանանց համար գերխոչընդոտների խնդիրն անհամեմատ մեծ սրությամբ է ծառացած, և դա հաստատում են հանրապետությունում վերջին երեք տարիների ընթացքում այս թեմայով անցկացված բոլոր սոցիոլոգիական հարցումները: Ըստ այդ տվյալների՝ հարցվածների ավելի քան 60%-ի կարծիքով՝ տղամարդիկ սահմանադրական իրավունքների իրացման հարցում օժտված են ավելի մեծ հնարավորություններով, քան կանայք, և միայն հարցվածների 1/3-րդն է համոզված, որ երկու սեռերն էլ ունեն հավասար հնարավորություններ: Թե հայ պատգամավորների ո՞ր մասն է մտնում այս 1/3-րդի մեջ, ցույց կտա քննարկումների և քվեարկության ընթացքը:

Ի դեպ, քննարկման ընթացքում չէր խանգարի հիշել, որ վերջերս ԵԽԽՎ ընդունած բանաձևում Հայաստանը հիշատակվեց այն երկրների շարքում, որոնցում կանանց կյանքի իրավունքը սահմանափակվում է դեռևս ներարգանդային զարգացման փուլում՝ ընտրողական աբորտների միջոցով: Եվ որքան էլ դա անհեթեթ հնչի, որոշ ծնողներ, առաջնորդվելով ժառանգ ունենալու բուռն ցանկությամբ, զրկում են իգական սեռի սաղմին լույս աշխարհ գալու հնարավորությունից: Էլ չենք խոսում, որ առանց այն էլ անբարենպաստ ժողովրդագրական ցուցանիշների ֆոնին սեռերի բնական հարաբերակցության արհեստական փոփոխությունը լրացուցիչ սպառնալիք է երկրի ազգային անվտանգությանը: Հուսանք, որ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին օրինագիծը քննարկելիս պատգամավորները հաշվի կառնեն նաև այս փաստարկը:

16-օրյակ

Խաղաղություն տանը - խաղաղություն աշխարհում

Ամեն տարի ամբողջ աշխարհում ավելի ու ավելի շատ մարդիկ են իրենց ձայնը միավորում կանանց նկատմամբ բռնությանը «ՈՉ» ասելու համար՝ նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 10-ը մասնակցելով «Ակտիվության 16-օրյակ ընդդեմ գենդերային բռնության» քարոզարշավի շրջանակներում անցկացվող տարբեր միջոցառումներին:

2011-ի քարոզարշավի կարգախոսն է «Խաղաղություն տանը - խաղաղություն աշխարհում. պայքարենք միլիտարիզմի դեմ և վերջ դնենք կանանց նկատմամբ բռնությանը»: Կարգախոսը ներկայացնում է քարոզարշավի ընդհանուր գաղափարը, սակայն կանանց նկատմամբ բռնության տեղական համատեքստին ավելի բնորոշ միջոցառումները նույնպես հնարավոր են:

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակը հրավիրում է բոլոր հետաքրքրված կազմակերպություններին, որոնք աշխատում են կանանց իրավունքների, մարդու իրավունքների, գենդերային և ներընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտներում, մասնակցել քարոզարշավին և միավորել ջանքերն այս տարվա 16-օրյա քարոզարշավն իրականացնելու համար:

Մանրամասների համար դիմել ՄԱԲՀ 16-օրյակ քարոզարշավի համակարգող Ջինա Սարգիզովային՝ էլ. փոստ cgbv.armenia@gmail.com կամ jinas@yandex.ru:

Խորհրդարանական ամբիոն

Ինչպե՞ս ապահովել հավասար մեկնարկային հնարավորություններ

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրինագծի մասին մեր հարցերին պատասխանում են ԱԺ պատգամավորները:



- Համաձա՞յն եք արդյոք օրինագծի հիմքում ընկած մոտեցումներին:

Գալուստ Սահակյան,
ՀՀԿ խմբակցության ղեկավար

Այս օրենքի նախագծին դեռևս ծանոթ չեմ, բայց այն գաղափարախոսությունը, որ բերվում է օտար աշխարհից՝ կապված կանանց հետ, ինձ համար ընդունելի չէ: Կին-մայր հասկացությունը մեզանում ամենաբարձր արժեքային համակարգում է, այնպես որ բերել այնպիսի օրենքներ, որ արտասահմանյան դրամաշնորհներով աշխատող կազմակերպություններն ավելի հզորանան, կարծում եմ՝ այդպիսի խնդիր չունենք: Բոլոր դեպքերում քննարկման ժամանակ կտեսնենք, թե կանանց ո՛ր իրավունքն է ոտնահարվել, որ հանկարծ ուզում են օրենքով ֆիքսել դրա իրագործման հնարավորությունը:

- Ի՞նչ կպատասխանեիք նրանց, ովքեր կարծում են, որ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներն արդեն իսկ բավարար են, և հավելյալ օրենքի անհրաժեշտություն այլևս չկա:

Արծվիկ Մինասյան,
ՀՅԴ խմբակցություն

Սա աբսուրդ հիմնավորում է: Եթե այդ սկզբունքով առաջնորդվենք, ապա Սահմանադրությամբ հռչակել ենք, որ ՀՀ-ն սոցիալական պետություն է, ուրեմն այս դրույթը պետք է որ բավարար լիներ, և այլևս անհրաժեշտ չէր քայլեր ձեռնարկել սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ: Սահմանադրությամբ հռչակվում են հիմնարար իրավունքները, որոնք հետո օրենսդրությամբ պետք է բացվեն, մշակվեն և մեխանիզմներ առաջադրվեն: Առանց դրա հնարավոր չէ ոչ միայն այդ իրավունքի պրակտիկ գործադրումը, այլև մարդկանց կողմից այդ իրավունքի պաշտպանության ընթացակարգի իրականացումը: Եթե կան մարդիկ, ովքեր համարում են հռչակված օրենքները բավարար, առաջարկում եմ այդ օրենքով մտնեն որևէ մեկի իրավունքի պաշտպանության դաշտ, ում պատճառվել է վնաս հենց նույն սեռային պատկանելությունից ելնելով: Նրանք չեն կարող դա անել, քանի որ չկան համապատասխան մեխանիզմներ և ապացուցողական բազա, որը միայն առանձին օրենքով հնարավոր է ձևավորել:

Այսպիսի օրենքի անհրաժեշտությունը, բազմիցս նշել ենք, որ կա, և, ի տարբերություն շատ այլ օրենքների, այն չի պահանջում ֆինանսական մեծ ռեսուրսներ պետության կողմից, այլ միայն քաղաքական կամք և վճռական կեցվածք, որ սեռերը պետք է հավասարաչափ ներկայացված լինեն հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ սկսած պետական կառավարումից մինչև քաղաքացիաիրավական հարաբերությունների դաշտ: Եվ եթե Սահմանադրությունը հարգող ժողովուրդ ենք, պետություն, ուրեմն պետք է հարգենք Սահմանադրությամբ ամրագրված՝ խտրականության բացառման սկզբունքը: Օրենքի կարևոր դրույթներից էլ այն է լինելու, որ բոլոր նրանք, ովքեր խտրական մոտեցում կցուցաբերեն՝ սեռի հատկանիշով, պատասխանատվություն են կրելու ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

- Ի՞նչ մոտեցում ունեն օրինագծի նկատմամբ Ձեր տղամարդ գործընկերները:

Կարինե Աճեմյան,
ՀՀԿ խմբակցություն

Բավական նորմալ են վերաբերվում և կարծում են, որ կնոջ դերը պետք է լինի հավասարակշռված, և այն կանայք, ովքեր կարողանում են ընտանեկան պարտականությունները համատեղել նաև մասնագիտական և հասարակական գործունեության հետ, պետք է հնարավորություն ունենան ներգրավված լինել հատկապես քաղաքականության մեջ:

Այս հարցերը շատ են քննարկվել Հանրապետական կուսակցությունում տարբեր ձևաչափերով՝ և՛ կանանց խորհրդում, և՛ կուսակցության խորհրդում: Մի խոսքով՝ բավարար աշխատանք կատարվել է: Մի շարք փոփոխություններ այդ համատեքստում արդեն իսկ ամրագրել ենք, օրինակ՝ ընտրական օրենսգրքում գենդերային քվոտայի ավելացումը և այլն: Ավելի քան վստահ եմ, որ ժամանակն է ընդունել այդ օրենքը, առավել ևս, որ արագ ինտեգրվում ենք եվրոպական արժեքներին:

Դրա հետ մեկտեղ Հանրապետական կուսակցությունը նաև պահպանողական կուսակցություն է՝ լավ իմաստով, որովհետև դա ենթադրում է ազգային ավանդույթների պահպանումը և փոխանցումը սերունդներին և այլն: Ուզում եմ հիշեցնել, որ հայերը միշտ էլ կանանց տեղ են տվել, և վերաբերմունքը կնոջ հանդեպ բարձր մակարդակի է եղել, ուղղակի «կինը և քաղաքականությունը» ոլորտում կան որոշակի կարծրատիպեր, որոնք պետք է հաղթահարվեն: Այդ իմաստով մենք կարծում ենք, որ կանանց դերը, այո՛, շատ կարևոր է, բայց երբեք չի կարելի արհեստականորեն նրանց առաջ քաշել, պետք է ներգրավել այն կանանց, ովքեր իրոք պատրաստ են ակտիվ գործունեության:

Համենայն դեպս ես համոզված եմ, որ մենք այսօր պատրաստ ենք այս օրենքը կյանքի կոչելու, որովհետև բազմաթիվ կանայք ունենք, որոնք երկար տարիներ կուսակցական աշխատանքով են զբաղվում: Վստահ եմ նաև, որ շատ ակտիվ քննարկում է սպասվում, որովհետև օրինագիծը երկար տարիների խմորումների արդյունք է: Իսկ ինչ մնում է կընդունվի՞ այն, թե՞ ոչ, կարծում եմ՝ հենց այնպես կառավարությունը չէր բերի... Ավելին՝ օրենքը մինչև խորհրդարանական ընտրությունները պետք է որ ընդունվի:

- Ինչպե՞ս կքվեարկեք կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների հավասարեցմանն ուղղված օրինագծին:

Վիկտոր Դալլաքյան,
անկախ պատգամավոր

Ռոմեական մի ասացվածք կա, որ չգրված օրենքներն ավելի գործուն են, քան գրվածները: Կարծում եմ՝ կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրները լուծվում են ոչ այնքան օրենքներով, թեև օրենսդրական միջավայրը խիստ կարևոր է:

Շատ ավելի կարևոր են քաղաքական ավանդույթները: Ցավոք, հայ իրականության մեջ, մասնավորապես, քաղաքականությունում կանանց ներկայացվածության առումով նման ավանդույթներ չեն ձևավորվել, և կարելի է ասել, որ Հայաստանն այդ ուղղությամբ առաջին քայլերն է կատարում: Բավական երկար ժամանակ պետք է անցնի, որ կնոջ և տղամարդու հավասարությունն իրականության և գիտակցության մեջ ամրագրվի: Առայժմ ես հակառակն եմ տեսնում. զոռբայության երևույթներ կանանց նկատմամբ և նրանց հասարակական-քաղաքական կյանքից դուրս մղելու միտումներ: Գուցե ես սխալվում եմ, բայց մեր հասարակության մեջ նման մտայնություններն այսօր գերակշռող են: Բայց պետությունը բոլոր դեպքերում պետք է համապատասխան օրենսդրական բազա ձևավորի, ապահովի հավասար մեկնարկային հնարավորություններ: Մնացածը պետք է հասարակությունը որոշի: Ես կողմ կքվեարկեմ: Չէի ցանկանա կանանց սիրաշահել, սակայն նրանք ավելի խելացի են, քանի որ տղամարդկանց ներշնչել են, որ նրանք իրենցից խելացի են: Իմ գնահատմամբ՝ եթե կանայք ղեկավարեին աշխարհը, քաղաքական և ռազմական էքսցեսները կնվազեին:

- Արդյոք պատրա՞ստ է այսօր խորհրդարանն ընդունելու այս օրինագիծը:

Արամ Սաֆարյան,
Ադ մարդու իրավունքների պաշտպանության մշտական հանձնաժողովի ղեկավար

Ես չեմ խոսի ամբողջ խորհրդարանի անունից: Բայց իմ կարծիքով կա այն ըմբռնումը, որ այս օրինագիծն անհրաժեշտ է ընդունել կանանց ներուժը երկրի զարգացման գործընթացներում լիարժեք ներգրավելու առումով: Բացի այդ, Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում մենք այս օրենքը պետք է ընդունած լինեինք դեռևս երկու տարի առաջ: Սակայն այն փաստը, որ մենք ընտրական օրենսգրքում արդեն ամրագրել ենք կանանց 20%-անոց ներկայացվածությունը համամասնական ցուցակներում, խոսում է այն մասին, որ եվրոպական չափորոշիչները մեզանում գտնում են իրենց տեղը:

Ծանոթ եմ այն դժվարություններին, որոնցով այս օրինագիծն անցել է, սակայն այսօր մենք ըստ էության մոտեցել ենք եզրափակիչ փուլին: Օրինագծի ընդունմամբ շահագրգռված են նաև հասարակական կազմակերպությունները: Նրանց հետ վերջին հանդիպման ժամանակ ես խոստացա, որ այս հարցը կլինի մեր հանձնաժողովի ուշադրության դաշտում: Կարծում եմ՝ այս հարցով կարելի է նաև խորհրդարանական լսումներ անցկացնել՝ պարզելու, թե ինչպե՞ս է հասարակությունը վերաբերվում այս խնդրին:

- Ժամանակին նման օրենքի հեղինակ եք հանդիսացել, արդյոք հիմա՞ էլ նույնքան շահագրգռված եք դրա ընդունմամբ:

Հեղինե Բիշարյան,
«Օրինաց երկիր» խմբակցության ղեկավար

Այս օրենքի ընդունումը կարևորում եմ նրանով, որ այն հնարավորություն կտա կանանց ի վերջո գտնել իրենց տեղը շատ ու շատ բնագավառներում, որտեղ իսկապես նրանք կարող են լուրջ դերակատարություն ունենալ: Այդ առումով ուրախությամբ նշեմ, որ վերջին շրջանում առաջընթաց ենք արձանագրել, օրինակ՝ ընտրական օրենսգրքի փոփոխություններով ամրագրեցինք կանանց քվոտայի ավելացում ապագա խորհրդարանում: Բայց ես կարծում եմ, որ կանանց խնդիրը միայն օրենսդիր մարմնում ներկայացվածությամբ չէ, որ լուծվում է, որովհետև այսօր բոլոր ոլորտներում էլ, կառավարման բոլոր օղակներում և գերատեսչություններում, որտեղ կան կնճռոտ խնդիրներ, կանայք պարտադիր ձևով պետք է ներկայացված լինեն: Ստիպված ենք օրենքով այդ հարցը կարգավորել, որովհետև տեսել ենք, որ Հայաստանի անկախացման 20 տարիների ընթացքում կանանց դերն ու ներուժը այնպես չեն օգտագործվել պետության կայացման գործում, ինչպես հնարավոր էր:

Դրա հետ մեկտեղ նշեմ, որ օրինագիծը նպատակ ունի կարգավորելու կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները և հնարավորությունները, և շատերը հաճախ հասկանում են, որ այն վերաբերում է միայն կանանց: Այնինչ այդ նախագիծը նպատակ ունի հավասար դաշտում տեսնել թե՛ տղամարդուն, թե՛ կնոջը: Եվ սխալ է հասկանալ, թե այս օրենքով տարանջատվում է կինը, ու պաշտպանվում են միայն նրա շահերը:

Զրուցեցին Լիա Խոջոյանը,
Հասմիկ Հարությունյանը

Պատճառ - հետեւանք

«160 մլն մարդ սեռի պատճառով լույս աշխարհ չի եկել»

Ռեպորտաժ ԵԽԽՎ աշնանային նստաշրջանից

Ինչպես հայտնի է, ԵԽԽՎ աշնանային նստաշրջանում ընդունվեց «Պտղի սեռի նախածննդյան ընտրության մասին Հայաստանում, Ալբանիայում, Ադրբեջանում և Վրաստանում» բանաձևը: Փաստաթուղթը ներկայացրել էր Եվրախորհրդի հավասար հնարավորությունների հանձնաժողովը ի դեմս զեկուցող շվեյցարացի պատգամավոր Դորիս Ստամպի:

Զեկույցում նշվում է, որ հիշատակված երկրներում տղաների և աղջիկների թվի հարաբերությունը հասել է վտանգավոր նշագծի՝ մոտավորապես 112-ը 100-ին, ինչը կարող է նախածննդյան տեխնոլոգիաների արագ զարգացման հետևանք լինել, որոնք հնարավորություն են տալիս ծնողներին նախօրոք իմանալ ապագա երեխայի սեռը և ընդհատել հղիությունն այն դեպքում, եթե պտուղն իգական սեռի է: Բանաձևի նախագծում կոչ է արվում նշված պետություններին հետազոտել տվյալ երևույթի բոլոր պատճառները, իսկ ԵՄ բոլոր անդամներին՝ արգելք դնել սեռի հատկանիշով աբորտների վրա: Նախնական տարբերակում առաջարկվում էր նաև բժիշկներին արգելել վաղօրոք հայտնել երեխայի սեռը, սակայն վերջնական տեքստում այս առաջարկությունը հանվեց: Քննարկումների ընթացքում եվրոպացի խորհրդարանականները եկան այն եզրակացության, որ հարկ է պայքարել անմիջականորեն սեռի ընտրության հիմքում ընկած խնդրի, այսինքն՝ կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության դեմ և ջանքեր գործադրել հասարակությունում կանանց կարգավիճակը բարձրացնելու համար: Ինչպես նշեց իր ներածական խոսքում զեկուցող Դորիս Ստամպը, սեռի նախածննդյան ընտրությունը խտրականություն է աղջիկների և կանանց դեմ, որը կանայք գործադրում են իրենք իրենց դեմ: Այս տեսանկյան հետ ԵԽԽՎ պատգամավորները համաձայնեցին և՛ իրենց ելույթներում, և՛ մեզ հետ առանձին զրույցներում:

Ես ճանաչողական այցով Հայաստանում եղա ընթացիկ տարվա հունիսին և համոզվեցի, որ սեռի նախածննդյան ընտրության խնդիրն ընդունում են թե՛ խորհրդարանականները և կառավարության պաշտոնյաները և թե՛ բժիշկները: Իսկ սովորական կանայք նշում էին նաև, թե որքան կարևոր է, որպեսզի նույն այդ բժիշկներն իրենց թույլ չտան բացասական մեկնաբանություններ անել, եթե պտուղն իգական սեռի է: Իրականում այն հայ կանայք, որոնք միայն աղջիկ են ունենում, բախվում են ընտանիքի և հասարակության կողմից լուրջ ճնշման: Որոշ բաներ ինձ ցնցեցին, օրինակ՝ Հայաստանում ինձ հետ հանդիպած կանանցից մեկն ասաց, որ յուրաքանչյուր կին որդի ունենալու իրավունք ունի: Զարմանալի էր դա լսել, ես կարծում եմ, որ ոչ ոք իրավունք չունի ընտրելու երեխայի ապագա սեռը, քանի որ դա բնական պրոցես է: Այս խնդրի նկատմամբ վերաբերմունքը պետք է փոխվի, և գլխավոր հարցն այն է, որ ընդունվի այն փաստը, որ կանայք նվազ արժեքավոր մարդկային արարած չեն, քան տղամարդիկ:

ԵԽԽՎ զեկուցող
Դորիս Ստամպ, Շվեյցարիա

Պատերազմ է ծավալվել ոչ թե ընդդեմ երեխաների, այլ ընդդեմ ապագայի: Վերջին հաշվարկները ցույց են տվել, որ միայն Ասիայում չծնված աղջիկների թիվը հասնում է 160 մլն-ի: Դա նշանակում է, որ 160 մլն մարդ գոյություն չունի իր սեռի պատճառով, սա իսկական «գենդերոցիդ» է: Եվրոպայում նույնպես գոյություն ունի այդ խնդիրը: Անցանկալի է խոսել խնդրի տնտեսական կողմի մասին՝ շրջանցելով այն փաստը, թե ի՞նչ ողբերգություն է այն ներկայացնում կանանց համար: Սոցիալական տեսանկյունից՝ սա դանդաղ գործողության մի ռումբ է, որը պետք է կանգնեցնել՝ հասկանալով խնդրի արմատը:

Լիդիա Էրր,
Լյուքսեմբուրգ

Քանի դեռ մենք կընդունենք, որ աղջիկներն ու կանայք պետք է ենթարկվեն տղամարդկանց, այս խնդիրը կպահպանվի անկախ այն բանից, թե մենք ինչ օրենքներ կմշակենք: Սեռը որոշող միջոցներ կարելի է գտնել նաև «տակից», և եթե օրենքով արգելվում է աբորտ անել, ապա դա կարելի է անօրինակորեն անել: Սա է իրողությունը: Հիմքում ընկած կարծրատիպերի դեմ պետք է պայքարել:

Թինա Ակետոֆթ,
Շվեդիա

Խնդիրը երեխայի սեռի մասին տեղեկատվություն ստանալու մասին չէ, քանի որ անհնար է մերժել այդ իրավունքը: Մենք նաև պետք է առաջնորդվենք այն սկզբունքով, որ միայն կինը կարող է աբորտի մասին որոշում ընդունել: Ինչ վերաբերում է սելեկտիվ աբորտներին, ապա դրանք հնարավոր է կանգնեցնել միայն փոխելով մշակութային, կրոնական և բարոյական արժեքները:

Կարին Անդերսեն,
Նորվեգիա

Դենց որ կանայք և նրանց շրջանում բոլորը համոզված լինեն, որ աղջկա ծնունդը չի կարող անպատվություն լինել, կվերանա նաև սեռի նախածննդյան ընտրության վտանգը: Աղջիկներին վաղ տարիքից պետք է սովորեցնել, որ նրանց կարգավիճակը համեմատելի է այն կարգավիճակի հետ, որով օժտված են տղամարդիկ: Սեռի նախածննդյան ընտրության դեմ պայքարը պահանջում է հասարակության և կրոնի լիակատար համագործակցություն:

Աննիկ Ժիրարդին,
Ֆրանսիա

Օքսաննա Մուսայելյան
Ստրասբուրգ-Երևան

Կարծիքների խաչմերուկ

«Անկախության սերունդը» կանանց եւ տղամարդկանց հավասարության մասին

Անահիտ Գալստյան. «Առաջնային խնդիրը հայ կնոջը «համոզելն» է, որ նա ունի տղամարդկանց հետ հավասար իրավունքներ, և կարծում եմ՝ վերջին տարիներին նրանք կարծես թե «համոզվում» են»:

Հայկ Իշխանյան. «Ըստ իս՝ հավասարության մասին չի կարող խոսք լինել, քանի որ կինն ու տղամարդը լիովին տարբեր են թե՛ էությամբ, թե՛ մտածելակերպով: Հարցն այն չէ, թե ով է բարձր կամ ցածր, ուղղակի տարբեր են: Տանը հարմարավետություն ստեղծողը հենց կինն է, նաև երեխաների դաստիարակությունն էլ է ավելի շատ կնոջ պարտականությունը, քանի որ նրանք ավելի լավ են գլուխ հանում այդ գործից: Ու եթե միևնույն ժամանակ ձգտում են կարիերայի աճի և եթե հասցնում են, ուրեմն ինչո՞ւ ոչ: Ավելի էական են մարդու աշխատանքային հմտությունները՝ անկախ սեռից»:

Աննա Նիկողոսյան. «Հավասարությունը նշանակում է հավասար իրավունքներ, հնարավորություններ ու պարտականություններ: Այսինքն՝ տղամարդն ու կինը ոչ թե նույնացվում են, այլ նրանց իրավունքներն ու հնարավորություններն են նույնանում»:

Սոնա Սարգսյան. «Ճիշտ ժամանակն է դադարել կնոջը երկրորդ կարգի քաղաքացի համարելուց: Չգիտես ինչու, տղամարդիկ մնում են այն կարծիքին, թե շատ գործեր կան, որ կանայք չեն կարող անել: Կարող ենք վստահ ասել, որ եթե կանանց թույլ տան նստել բանակցությունների սեղանի շուրջը, նրանք փայլուն կերպով հաջողության կհասնեն այնտեղ, որտեղ տղամարդիկ ձախողվել են»:

Գևորգ Դերձյան. «Ամեն մարդ ինքն է իր կյանքի կառավարողը, չեմ էլ կարողանում պատկերացնել, որ ինչ-որ մեկը ցանկանա, որ իր կյանքն ընթանա ճնշման, ծեծի և բռնության ճանապարհով: Հայ տղամարդկանց թվում է, թե կինը միշտ իրենց թելադրանքով պետք է շարժվի... Ցանկալի է՝ մարդիկ հարգանք ցուցաբերեն միմյանց նկատմամբ»:

Նունե Գրիգորյան. «Քաղաքագիտության բաժնի ուսանողուհի եմ և հենց առաջին կուրսից զգացել եմ խտրական վերաբերմունք նույն կուրսի հակառակ սեռի ներկայացուցիչների կողմից: Նույնիսկ մի դասախոս ունեինք, ով ամեն անգամ ասում էր, որ աղջիկները չպետք է սովորեն այս բաժնում: Այսինքն՝ դեռևս կարծրացած մտածելակերպ կա, որ «կինը» և «քաղաքականությունը» բառերն անհամատեղելի են Հայաստանում: Ամենահետաքրքիրն այն է, որ քաղաքագիտության բաժնում միշտ իգական սեռի ուսանողները գերակշռում են, բայց մեր քաղաքական դաշտում հիմնականում տղամարդիկ են»:

Հրաչ Հովհաննիսյան. «Հայ տղամարդկանց մեծամասնության մեջ արմատացած այն կարծրատիպը, թե կնոջ տեղը խոհանոցն է, մեղմ ասած, հիմարություն է: Կնոջը խոհանոց գցել ու նրա առջև սահմանափակումներ դնել նույնն է, թե կեսօրին թիթեռ բռնել ու սպանել, այն դեպքում, երբ այն ընդամենը մեկ օր է ապրում: Իմ խորին համոզմամբ՝ կինը պետք է հնարավորություն ունենա դրսևորել իրեն ցանկացած

բնագավառում: Մյուս կողմից՝ բացառված չէ նաև այն, որ կլինեն կանայք, ովքեր կգերադասեն ոչ թե քաղաքականությունը, այլ խոհանոցը: Ամեն պարագայում կնոջը հարկավոր է ազատ թողնել իր ընտրության հարցում և չճնշել, առավել ևս՝ չքննադատել նրա ընտրությունը»:

Գայանե Ավագյան. «Ո՞վ է ասել, որ միայն կնոջ պարտականությունն է մաքրություն անելը, ճաշ եփելը, երեխաներին խնամելը: Տղամարդը պետք է օգնի կնոջը, չէ՞ որ այդ տանն ինքն էլ է ապրում, և որպեսզի այն մաքուր լինի, կարող է կնոջն օգնել տնային որոշ գործերում, չէ՞ որ երեխան նաև իրենն է, նրան դաստիարակելը, խնամելը պետք է հուզեն նաև հորը:

Կամ էլ՝ ո՞վ է ասել՝ քաղաքականությունը կնոջ գործ չէ, կինը չի կարող կառավարել, օրենքներ ընդունել, երկիր ղեկավարել: Եթե խոր մտածենք, ընտանիքի պահպանումը կառավարման տեսակ է, այնտեղ որոշում ընդունելն էլ, ղեկավարելն էլ, թեև ասում են տղամարդու լիազորությունն է, այնուամենայնիվ չի կարող իրագործվել առանց կնոջ մասնակցության: Նմանապես քաղաքականության մեջ: Կինն էլ քաղաքացի է, ում մտահոգում է իր անկախ երկրի ապագան:

Հետևաբար, ցանկության դեպքում նա էլ պետք է հնարավորություն ունենա ներգրավվելու քաղաքական գործընթացներում: Եվ միայն իր ցանկությունից և ազատ ընտրությունից է կախված՝ որքանո՛վ նա կօգտվի իր այդ հնարավորությունից»:

Տիգրան Բունիաթյան. «Եթե անգամ հայ կինը պատրաստ է ունենալու իր տեղը երկրի ղեկի առաջ, համոզված եմ, որ հայ տղամարդը դեռ չի հասել այն բարձր գիտակցությանը, որ իր կողքին կին առաջնորդի ներկայություն հանդուրժի»:

Զրուցեց Արման Ղարիբյանը

Փորձագետ

«Մենք կորցնում ենք նրանց, ովքեր 20-30 տարի հետո պետք է մայր դառնան»

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետյանի տեղեկացմամբ՝ վերջերս ավարտվել են իրենց աջակցությամբ անցկացված «Հղիության՝ սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների վերաբերյալ» հետազոտության դաշտային աշխատանքները: Դրա արդյունքները ներկայումս վերլուծության փուլում են և մինչև տարեվերջ կներկայացվեն հանրությանը:

- Հիշեցնեմ, որ ԵԽԽՎ աշնանային նստաշրջանում ընդունված ընտրողական աբորտների վերաբերյալ բանաձևի կարևոր դրույթներից մեկն էր՝ հետազոտել ու հասկանալ խնդրի էությունը: Այդ իմաստով, Հայաստանն նախքան բանաձևի ընդունումը արդեն իսկ որոշակի քայլեր էր ձեռնարկել և շատ շուտով կկարողանա պատասխան ստանալ խնդրո առարկայի վերաբերյալ: Ընդ որում, Հայաստանը տարածաշրջանում դեռևս միակ երկիրն է, որ արդեն արել է նման հետազոտություն: Նշեմ, որ անցկացված ուսումնասիրությունների արդյունքում պարզելու ենք ոչ միայն երևույթի տարածվածությունը, այլ նաև այն, թե որո՞նք են դրա պատճառները, և որտե՞ղ են թաքնված ակունքները:

Խնդիրը, ըստ իս, մեր ավանդական մտածելակերպի մեջ է՝ տղան հասարակության մեջ ավելի բարձր է գնահատվում ու դասվում, քան աղջիկը, և դա ունի իր պատճառները, որովհետև ասում են՝ «մեծանամ՝ տղես ինձ պահի»: Այսինքն՝ ապրիորի, ի սկզբանե հասարակությունը խոր կասկածներ ունի աղջիկ-կնոջ տնտեսական ունակությունների լիարժեքության մասով՝ արդյոք կինը կկարողանա՞ պահել իր ծնողներին, որովհետև արդյոք կինը լավ աշխատանք կունենա և այլն»:

Իրականում սեռային շեղումը ծնված աղջիկ-տղա երեխաների հարաբերակցության մեջ Հայաստանում արձանագրվել է 2000-ից՝ միջինը 100 աղջկան ծնվում էր 115 տղա: Սա արդեն 10 տոկոսի շեղում է բնության կարգավորման մեխանիզմի համեմատ: Հայաստանի համար, հաշվի առնելով նրա բնակչության ցուցանիշը, խնդիրն իսկապես մտահոգիչ է: Պարզաբանեմ՝ եթե այսպես շարունակվի, ու եթե մենք տարեկան որոշակի թվով աղջիկ երեխաներ կորցնենք, ապա պետք է գիտակցենք, որ կորցնում ենք նրանց, ովքեր 20-30 տարի հետո պետք է մայր դառնան:

Այսինքն՝ ծնելիության գործակիցն էլ լուրջ շեղում կտա: Եվ երբ ասում ենք, որ երկրի անվտանգությունն ապահովելու համար ավելի շատ տղաներ են անհրաժեշտ, չպետք է մոռանալ, որ մեզ անհրաժեշտ են նաև բավարար թվով մայրեր, ովքեր կծնեն այդ ապագա զինվորներին:

Եթե հետևելու լինենք այդ տրամաբանությանը, ապա 20-30 տարի հետո հասարակությունում կունենանք մոտ 40 հազարից ավելի ամուսնական տարիքի տղամարդ, քան հարսնացուներ նրանց համար: Կարծում եմ՝ կարիք չկա բացատրելու՝ ինչ լուրջ սոցիալական հետևանքներ և վտանգներ կարող է բերել սեռերի բնական հարաբերակցության նման խախտումը:

Զրուցեց Լիա Խոջոյանը

Մարտահրավեր երկրին

Մարդկության մայրամուտը սկիզբ կառնի, երբ երկրի վրա «վերջանան» կանայք

«Կանանց կոնսուլտացիայում իմ հերթին սպասելիս հաճախ եմ նկատել, թե ինչպես մայրերը կամ գուցե սկեսուրները զայրացած դուրս են բերում կաբինետից իրենց հեծկլտացող դուստրերին-հարսներին: Սկզբում մտածում էի՝ երևի արգանդում գտնվող երեխայի մոտ բարդ արատ են հայտնաբերել, և երիտասարդ մայրը դրա համար է արտասվում: Սակայն որքան մեծ էր զարմանքս, երբ բուժքույրը պարզաբանեց. «Ուղղակի բժիշկը նրանց ասել է, որ աղջիկ են ունենալու, դրա համար էլ այդպիսի դեմքերով են դուրս գալիս»... Նման ցնցում ապրեցի նաև այն ժամանակ, երբ փողոցում ծանոթ մի կին հետաքրքրվեց՝ պարզե՞լ եմ արդյոք սպասվող երեխայի սեռը: Լսելով իմ հպարտ՝ «աղջիկ եմ ունենալու» պատասխանը՝ հիասթափված ծոր տվեց. «Ոչինչ, հաջորդը տղա կլինի»... Իսկ եթե ոչ, մի՞թե դա ցավակցելու առիթ է»,- իր դիտարկումներով է կիսվում մեր ընթերցողուհիներից մեկը:

Հարց է ծագում. իսկ ի՞նչ կլինի, եթե երրորդ կամ չորրորդ երեխան նույնպես աղջիկ լինի: Նման դեպքերում է, որ խորապես հիասթափված ամուսինը երբեմն իրեն իրավունք է վերապահում ծննդատնից տուն չտանել հերթական աղջիկ ունեցած կնոջը ...

Ճիշտ է, ինչպես վկայում է բազմաթիվ ընտանիքների փորձը, հետագայում այդ նույն հայրերը ջերմորեն կապվում են հենց չսպասված աղջիկներին և հաճախ նույնիսկ նախընտրում են նրանց՝ բաղձալի արու զավակից: Սակայն այսպիսի երջանիկ ավարտ ունենում են միայն այն պատմությունները, որոնցում ամուսինները չեն փորձում տղա-աղջիկ երկընտրանքը լուծել ընտրողական աբորտի միջոցով:

Իրականում մենք չենք էլ գիտակցում իրավիճակի ողջ ցինիզմը. ընտանիքը որոշում է երեխա ունենալ, կինը գիտակցաբար հղիանում է, և երբ արդեն պտուղը համեմատաբար հասունացել է, որոշում է՝ արժանի՞ է արդյոք այդ երեխան լույս աշխարհ տեսնելու, թե՞ ոչ՝ առաջնորդվելով միայն սեռի սկզբունքով: Տղան արժանի է, աղջիկը՝ ոչ, նշանակում է՝ սպանենք: Բարի, մի նոր փորձ... Պարզվում է, մենք այնքան էլ չենք հեռացել այն բարբարոսներից, ովքեր սովորույթի համաձայն ողջողջ թաղում էին նորածիններին լոկ նրա համար, որ աղջիկը վատ նշան է... Այն տարբերությամբ, որ արդիական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս իմանալ սեռը և «սպանության» գործողությունը կատարել վաղօրոք...

Բրիտանական հեղինակավոր The Economist հանդեսի կանխատեսումներով՝ մարդկության անդառնալի մայրամուտը կսկսվի այն ժամանակ, երբ երկրի վրա կանայք «վերջանան»: Գործընթացը սկիզբ կառնի արդեն III հազարամյակում և կավարտվի V-VI հազարամյակների սահմանագծին, երբ լույս աշխարհ կգա մարդկության պատմության մեջ վերջին աղջիկը: Նման մարգարեություններին անգամ թերահավատությամբ վերաբերվելով՝ անհնար է չընդունել, որ աշխարհն արդեն հասցրել է մի քանի վճռական քայլ անել մարդկության համար կործանարար այդ ճանապարհին: Չինաստանում, օրինակ՝ ընտրողական աբորտների հետևանքով տղամարդ բնակչության գերակշռությունն արդեն հասել է 40 մլն մարդու: Տեղացի սոցիոլոգների կանխատեսումներով՝ սա կբերի միասեռական հարաբերությունների ծաղկման, ամուսնական միգրացիայի կամ հարևան երկրներից հարսնացու փախցնելու երևույթներին: Տղամարդ բնակչության կրճատման մեկ արմատական միջոց ևս գոյություն ունի՝ պատերազմը:

The Lancet բժշկական հրատարակության տվյալներով՝ վերջին 20 տարիների ընթացքում Հնդկաստանում սեռի հատկանիշով կատարվել է շուրջ 20 մլն աբորտ: Այս վտանգավոր երևույթի դեմ պայքարելով՝ հաճախ օրենսդրորեն արգելում են բժիշկներին երեխայի սեռի մասին տեղեկություն տալ: Ի պատասխան գրանցվում են դեպքեր, երբ ամենահամառ ծնողները դիմում են վիրաբուժական միջամտությանը՝ այդ եղանակով փոխելով արդեն իսկ ծնված երեխայի սեռը և աղջկա փոխարեն ստանալով տղա:

ԵՄԽՎ-ի վերջերս ընդունված բանաձևում՝ ընտրողական աբորտների տարածվածությամբ աչքի ընկնող չորս երկրների շարքում, ավաղ, հայտնվել էր նաև Հայաստանը: Նշված երկրներում (Ալբանիա, Ադրբեջան, Վրաստան, Հայաստան) ծնվող աղջիկների և տղաների հարաբերակցությունը հասել է ժողովրդագրության համար վտանգավոր հաշվեկշռի՝ 112 տղա 100 աղջկա դիմաց՝ 105-ը 100-ի բնականոն հարաբերակցության դեպքում:

Ըստ պաշտոնական աղբյուրների՝ Ադրբեջանում վերջին 12 տարիներին միայն յուրաքանչյուր երրորդ նորածինն է աղջիկ: Ի հետևանս՝ 16 տղա և 6 աղջիկ. այսպիսին է այսօր սեռերի հարաբերակցությունը դպրոցներում՝ 1-6-րդ գրեթե բոլոր դասարաններում: Այս իմաստով համեմատաբար բարվոք է վիճակը Վրաստանում, որտեղ հարաբերակցությունը 111-ը 100-ին է:

Հայաստանում այս տարվա ցուցանիշները վկայում են, որ վտանգավոր միտումը խորանում է: Այսպես, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ ընթացիկ տարվա 5 ամիսներին մեր երկրում ծնվել են 8977 տղա և 7661 աղջիկ, այսինքն՝ հարաբերակցությունը կազմել է 117-ը 100-ի:

Ինչպես վկայում են ժողովրդագիրները՝ սեռային հավասարակշռության խախտմանը երբեմն «միջամտում» է նաև ինքը՝ բնությունը: Այսպես, պատերազմից անմիջապես առաջ և հետո շատ տղաներ են ծնվում, իսկ բազում մարդկային կյանքեր խլած տարերային աղետներից հետո կտրուկ աճում է լույս աշխարհ եկած երկվորյակների և եռվորյակների թիվը: Սակայն այսօր հետազոտության արդիական մեթոդները հնարավորություն են ընձեռում ծնողները սեփական հայեցողությամբ լուծելու բնության կողմից կարգավորվող հարցը, ինչը կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ երկրի ժողովրդագրության և նրա ապագայի համար:

ԵՄԽՎ-ում հայաստանյան պատվիրակության անդամ, Աժ պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը դեռևս Ստրասբուրգ մեկնելուց առաջ ձևակերպեց պաշտոնական դիրքորոշումը խնդրի վերաբերյալ: Նրա խոսքով՝ «խնդիրը կա, սակայն չի հասել այնպիսի ծավալների, որի դեպքում Հայաստանն ընդգրկվի ռիսկային երկրների ցուցակում»: Բացի այդ, ի տարբերություն այլ երկրների, որտեղ սելեկտիվ աբորտներն առավելագույնս են տարածված, հայ կանայք սովորաբար դիմում են սեռի հատկանիշով հղիության արհեստական ընդհատմանը երրորդ և չորրորդ հղիության ընթացքում՝ բացարձակ լոյալություն հանդես բերելով առաջնեկների սեռի նկատմամբ: Այս փաստը հաստատվել է նաև ազգային վիճակագրական ծառայության 2010-ի տվյալներով, որոնց համաձայն եթե առաջին հղիության ընթացքում լույս աշխարհ են եկել 11.290 տղա և 10.664 աղջիկ, երկրորդի ժամանակ՝ 8325 տղա և 7556 աղջիկ, ապա երրորդ և չորրորդ հղիություններից հետո խզումը հօգուտ տղաների ավելանում է մեկուկես անգամից ավելի: Այսինքն՝ առաջին և երկրորդ երեխան իրավունք ունեն աղջիկ ծնվելու, իսկ երրորդն ուղղակի պարտավոր է տղա լինել: Արդյունքում՝ ամփոփ տարեկան վիճակագրությունը մեզանում իրոք մտահոգիչ է՝ 100 աղջիկ 114 տղային:

Սոր և մանկան առողջության պահպանման կենտրոնի ղեկավար, պրոֆեսոր Գեորգի Օկոևի խոսքով՝ առկա իրավիճակը լուրջ անհանգստության տեղիք է տալիս և պահանջում համապատասխան միջոցներ: «Հոգ տանելով այսօրվա ընտանիքի մասին՝ մենք չպետք է մոռանանք վաղվա օրվա ընտանիքի մասին: Ինչպիսի՞ն այն կլինի սեռերի նման հարաբերակցության, այն է՝ վերարտադրողական տարիքի տղամարդկանց ավելցուկի և հարսնացուների սուր պակասի դեպքում: Ուստի կարծում եմ, որ անթույլատրելի է հայտնել երեխայի սեռի մասին հղիության վաղ փուլերում, երբ հնարավոր է նրանից ազատվել»,- ասում է նա: «Ծնելիությունը ոչ մի պարագայում չի կարող կարգավորվել երեխայի սեռի հատկանիշով»,- համարում է ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր մանկաբարձ-գինեկոլոգ, ակադեմիկոս Ռազմիկ Աբրահամյանը:

Այդուհանդերձ, բազմաթիվ բժիշկներ և պաշտոնյաներ մտավախություն ունեն, որ երեխայի սեռի մասին տեղեկատվության արգելքը կբերի կոռուպցիայի աճի, երբ ծնողները կսկսեն միջոցներ հայթայթել բժիշկներից իրենց անհրաժեշտ տեղեկություններն կորզելու նպատակով: Փորձագետների գնահատմամբ՝ խնդրի լուծումը ծնելիության խթանման և բազմազավակ ընտանիքների աջակցության հարթությունում է: Միաժամանակ, հարկ է բարձրացնել բնակչության իրազեկությունը աբորտների վնասի և անընդունելիության մասին, էլ չենք ասում ընտրողական աբորտների:

Վալերիա Զախարյան

Ի դեպ

Պե՞տք է արդյոք ծնողներն իրավունք ունենան ընտրելու իրենց երեխայի սեռը

Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին եվրոպական կոնվենցիայով արգելվում է սեռի նախածննդյան ընտրությունը:

14-րդ հոդվածում ասվում է.

«Չի թույլատրվում մանկածնության օժանդակ բժշկական տեխնոլոգիաների կիրառումը ապագա երեխայի սեռի ընտրության նպատակով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ արվում է՝ կանխելու ապագա երեխայի կողմից սեռով պայմանավորված հիվանդության ժառանգումը»:

Սովորական սեքսիզմ

«Շուկայում առկա ջեռուցման կաթսաները բազմաթիվ են»...

«...Դրանց մեջ կան չափերով մեծ կաթսաներ, էկոլոգիապես ոչ մաքուր կաթսաներ, աղմկոտ կաթսաներ, անարդյունավետ կաթսաներ... Բայց կա մեկը, որը կարելի է տուն տանել»:

Հայ հեռուստադիտողների լայն շրջանակներին, անշուշտ, հայտնի է հայկական գովազդի հերթական այս «գլուխգործոցը»: Սակայն հայտնի չէ, թե դիտողների քանիսի մոտ զարմանք կամ գոնե հարց է առաջացրել կնոջ համեմատությունը գազի կաթսայի հետ: Այնինչ այս 30 վայրկյանանոց գովազդի հիմքում ընկած գռեհիկ «ալեգորիաներն» ուղղակի աղաղակող են կանանց նվաստացնելու առումով: Միջազգային պրակտիկայում նման վերաբերմունքը որակվում է որպես սեքսիզմ, այսինքն՝ սեռի հատկանիշով նվաստացում կամ ուղղակի խտրականություն, ինչը, ի դեպ, Հայաստանի Սահմանադրությամբ արգելված է:

Հ.Գ. Սա բնավ կոչ չէ գազի կաթսան համեմատելու տղամարդկանց հետ: Պարզապես հետաքրքիր է՝ ի՞նչ էին մտածում տեսահոլովակում կաթսայի դերում հանդես եկող երիտասարդ կանայք... Եվ տեսնես տեսահոլովակի «ստեղծագործական» խմբում կին կա՞ր...

Սուսաննա Հովհաննիսյան

Ո՛Չ ԲՌՆՈՒԹՅԱՆԸ

Ընտանեկան բռնություն «ընտանեկան» սերիալներում

Վերջերս հայկական ռեյտինգային համարվող սերիալներից մեկի դեռասանուհին վրդովված կիսում էր իր մտքերը լրագրողների հետ խաղընկերուհու հետ կապված աղմկոտ պատմության վերաբերյալ (խոսքը համացանցում հայտնված մերկ լուսանկարների մասին է): «Մենք ընտանեկան սերիալ ենք, մեզ նայում են ժամը 20:00-ին, նայում են երեխաների պապաները, մամաները ու 100 տոկոս, եթե մի պապա տեսնի, որ իր երեխան եթերում նայում է նրան ..., չեմ պատկերացնում՝ ինչպե՞ս կարող է դա թույլ տա ծնողն իր երեխային»:

Եվ իսկապես, ինչպե՞ս կարելի է երեխաներին թույլ տալ դիտել և էլ չենք ասում «ընտանեկան» անվանել այն սերիալները, որոնցում ընտանեկան բռնությունը ընդունված նորմա է: Կանանց խփում, ստորացնում, բռնանում են, ընդ որում՝ բռնացողի դերում հանդես են գալիս բոլորը՝ և՛ բացասական հերոսները, և՛, ինչը որ առավել ևս անթույլատրելի է՝ դրական կերպարները: Արդյունքում՝ բռնությունը հեռուստաէկրանում ներկայանում է ռոմանտիկ լուսապսակով: Հարցրեք ցանկացած հոգեբանի՝ ինչպիսի՞ն է նման ուղերձի գինը մանկահասակ և դեռատի հեռուստադիտողների համար, ովքեր հավատում են, որ էկրանային կյանքն իրականություն է, և չեն հասկանում, որ կնոջ նկատմամբ տղամարդու նման վարքագիծը չի կարող բնականոն դիտվել: Որտե՞ղ է երաշխիքը, որ մի քսան տարի անց այն երեխան, որ իր մայրիկի հետ աչքը չէր կտրում սերիալային նման տեսարաններից, նույնը չի կրկնի իր ընտանիքում՝ լավ յուրացնելով էկրանից քարոզվող վարքագծի մոդելը. «Եթե կինն իրավացի չէ, պետք է նրան ապտակ հասցնել»...



Ա.Օ.

Global Fund for Women

Հավելվածը հրատարակվել է Կանանց համար գլոբալ հիմնադրամի աջակցությամբ

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
էլ. հասցե՝ promediagender_arm@yahoo.com